

մեռած մարդիկը կենդանացեր են՝ կըր-  
նանք հասկընալ թէ հապա որչափ ա-  
ւելի շատուոր պիտի ըլլան ան խեղջերն  
որ իբրև մեռած թաղուեր ու ետքը  
աչքերնին գերեզմանին ահաւոր մթու-  
թեանը մէջ բացեր են :

Իւերեսյթ մահը կենդանութեան  
զործողութեանցը առժամանակեայ և  
անկատար դադարումն է, իսկ իրական  
մահը բացարձակ ու յարատե դադա-  
րումն է նոյն դործողութեանց :

Իրական մահուան նշաններն ասոնք  
են . մեռելի գոյն, մարմնոյն բոլորովին  
պաղիլը, աչքերուն մթըննալն ու տկա-  
րանալը, մկանանց շարժման դադրիլը  
և անդամոց թմրութիւնը :

Իւայց որուլիետե կրնայ ըլլալ որ աս  
նշաններէն շատը և կամ' մէկ քանին ի-  
րապէս մեռելոյն վրայ չերենայ ու առ-  
երելոյթ մահուան վրայ երենայ, ապա-  
հով ձամբան աս է որ մարդ սպասէ ին-  
չուան որ մեռելը սկսի քիչ մը աւրուիլ:

Ի՞ս բանիս վրայ քաղաքին ոստիկա-  
նութիւնն ալ մեծ փոյթ պիտի ունե-  
նայ, և քիչ մը տարակոյս որ տեսնէ՝  
պէտք է որ ուշացընէ թմաղումը : Իմէն  
ատեն ալ բժիշկը պիտի հաստատէ  
հիւանդին մեռնիլը ու ինքը նախ հրա-  
ման պիտի տայ թաղելու, ինչպէս որ  
լուրոպայի մէջ օրէնք է :

Իւայց ուրիշ անգամ մըն ալ մեռելոց  
վրայ ընելու քանի մը կարեւոր զգուշու-  
թիւններուն վրայ կը խօսինք :

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Երդ հօր ՚ի վերայ հաւան նազեւյ :

Հանդիւր մանուկս աչօք վըճիտ  
հանդիր անոյշ յօրօրոցիդ :

Այդ հրաշագեղ գոհար բըբունք  
ի յարթնութեանդ միշտ երերունք  
Ոհ զի՞ խաղաղ և անշարժիկ  
Փակեալ ՚ի նինջ են աւասիկ .

Ըրթունք շուշանք լըցեալ շաղեցու-  
թիւններուն վրայ կը խօսինք :

Ննջեա մանուկս աչօք վըճիտ  
Ննջեա յանգուր յօրօրոցիդ :

Յօղն ՚ի վերայ վարդին թերթից  
Իմ ցող աչաց վառ վառ այտիցդ  
Թշուառ մանկիկ, քեզ մօր միակ  
Ո՛հ անժըլպիտ են գորովանք,  
Զուրկ ՚ի նազուկ յայս ափս ամբին  
Հօր կաթոգին ՚ի համբուրից  
Որ ՚ի գգուանս իւր սիրակեզ  
Այսպէս փափկիկ ծընաւ ըզքեղ :

Աւազ ՚ի մէնջ գընաց հեռի ,  
Թող ըզքեղ որբ և զիս այրի  
Զանդրանիկն իւր որդեակ չըքնաղ  
Եւ զտարփալի հարսնըն մատաղ :

Ոչ գողորակն քեզ այլ եղբայր  
Լիցի ընկեր սիրապատար .

Դու անմեղուկ իմ աղաւնեակ  
Դու ինձ միայն մնացեր որդեակ :

Այլ մեք լըքեալ թողաք անտէր .  
Եւ մինչ ես մայրդ քեզ առընթեր  
Ըզքայդ ցերեկ ՚ի կոծ ամբաւ  
Ազեխորով մաշիմ ՚ի ցաւ .

Ժպտես ճչես քաղցրախօսիկ  
Կամ յօրոցիդ հանգչիս հեզիկ .

Եւ քո հայրիկ ՚ի հող աղիսուր  
Գերեզմանաց անդր ՚ի բըլուր  
Ըուրջ պար առեալ նոճեաց ՚ի սեաւ .

Ննջէ մահուն ընդ ցուրտ շլրմաւ :

Արդ ՚ի շըթունսդ իսկ վարդաձոյլ  
Զըւարթութեան փայլէ նըշուլ .

Ոնդէր երեսքըդ ժպաեցան .

Հրեշտակը եղեն քեզ յանդիման  
Խաղաղախին ըզքե անոյշ .

՚ի համբուրիկս նոքա քընքոյշ .

Մին զիւնափայլ պարանոցիկ .

Այլք ըզթաթիկը քո փափկիկ .

Եւ յանուանէդ ըզքեղ ձայնեն .

Կամ շուրջ ըզքե պար բոլորեն .

Այլք խաղալով ընդ քոյդ օրոց  
Յունկնըդ մնչեն ձայնիկս երդոց .

՚ի քո քաղցրիկ մօրէդ ծածուկ  
Մանկիկ, յերկինս եկ փափիցուք . . .

Եւ քոյդ արդեօք թռեալ հոգեակ . . .

Զարթիր զարթիր իմ աղաւնեակ .

Կաթն անուշիկ ըընոյդ փոխան  
Քեզ շամբեցից մեղածորան :

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻՔԹԱՇԱՀԱՆ  
ՅԱՀԱԿԱՆԵՐԱՑ ՄՈՒՐԱՑ . ՎԱՐԺԱՐԱԽ